ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հասմիկ Հովհաննեսի Բարեղամյանի ատենախոսությունը «Ձվարանային պահուստը որպես դեռահաս տարիքի աղջիկների վերարտադրողական ներուժի գնահատման նոր գործիք» թեմայով հանդիսանում է ավարտուն հետազոտություն, որն ունի գիտական և գործնական մեծ նշանակություն:

Ըստ թեմայի արդիականության, գիտական նորույթի և արդյունքների՝ այն կարող է որակավորվել որպես արժեքավոր ներդրում մանկաբարձագինեկոլոգիական պրակտիկայում: Հեղինակի կողմից ստացված արդյունքները հավաստի են, եզրակացություններն ու հետևությունները՝ հիմնավորված:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ համարում եմ, որ աշխատանքը համապատասխանում է թեկնածուական ատենախոսության պահանջներին և կարող է ներկայացվել հրապարակային պաշտպանության ԺԴ.00.01 – «Մանկաբարձություն և գինեկոլոգիա» մասնագիտությամբ բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

Պաշտոնական ընդդիմախոս
«Շենգավիթ» բժշկական կենտրոնի գլխավոր բժշկի տեղակալ,
Երևան քաղաքի գլխավոր մանկաբարձ-գինեկոլոգ
Բժշկական գիտությունների թեկնածու Ռ.Ս. Վարդանյան

«Շենգավիթ» բժշկական կենտրոնի գլխավոր բժշկի տեղակալ բ.գ.թ. Ռ.Ս.Վարդանյանի ստորագրությունը հաստատում եմ
«Շենգավիթ» բժշկական կենտրոնի կադրերի բաժնի պետ Շ.Մկրտչյան

30 ապրիլի 2025 թ.